# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ջերմուկ**

**21/ապրիլ/2023 թ.**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...12... անդամներ:

Բացակա էին՝ Հասմիկ Մարգարյանը, Գոհար Խաչատրյանը:

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին</u>** համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավարի պաշտոնակատար Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը, գլխավոր մասնագետ Արսեն Գառնիկյանը, համայնքի ղեկավարի օգնական Արտուշ Սիմոնյանը, առաջատար մասնագետ-սոցիալական աշխատող Մոնիկ Մարգարյանը:

**<u>Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը</u>**

**<u>Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը</u>**

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական՝ 2023 թվականի ապրիլի 21-ի նիստի հետևյալ *օրակարգը.*

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.2. Ջերմուկ համայնքի 2022 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.3. Ջերմուկ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) նախագծի մշակման աշխատանքների գործընթացը իրականացնելու ժամանակացույցը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.4. Ջերմուկ համայնքում հողի կադաստրային արժեքի փոփոխմամբ պայմանավորված գործող վարձակալության, կառուցապատման և սերվիտուտի իրավունքի տրամադրման պայմանագրերում վարձավճարի (վճարի) փոփոխություն կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 3-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 10-Ն որոշումն անվավեր ճանաչելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.7. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.8. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.9. «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու համաձայնություն տալու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.10. Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» և «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.11. Ջերմուկ համայնքի «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Թադևոսյան*

1.12. Դրամական օգնություն տրամադրելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյան*

1.13. Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված ուղերձ ընդունելու մասին

*զեկ. համայնքի ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության ղեկավար Ս. Ավետիսյան*

1.14.Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի Կայուն զարգացման 2030 օրակարգի կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ս. Վարդանյան*

1.15. Ջերմուկ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Կողմ*----------*11*---------- *Դեմ*----------*0*---------- *Ձեռնպահ*----------*1*----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----------10---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------2----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2022 թվականի հաշվապահական հաշվեկշիռը և համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն NN 1-5 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----------10---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------2----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ, 1.5-րդ և 1.6-րդ կետերին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) նախագծի մշակման աշխատանքների գործընթացների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----11---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ (ՎՃԱՐԻ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-ին մասին 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ, 48[1]–րդ հոդվածի 8-րդ, 81-րդ հոդվածի 3-րդ և 94-րդ հոդվածի 6-րդ մասերով, Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգի 57-րդ կետով՝

1. Հաշվի առնելով Ջերմուկ համայնքում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության նոր սահմանների և, ըստ այդմ, կադաստրային նոր արժեքների սահմանումը՝ համայնքում գործող վարձակալության, կառուցապատման և սերվիտուտի իրավունքի տրամադրման բոլոր պայմանագրերը (այսուհետ՝ պայմանագրեր) վարձավճարի (վճարի) մասով վերանայել՝ կատարելով փոփոխություններ. պայմանագրերի գինը՝ տարեկան պարբերականությամբ, սահմանել անշարժ գույքի հարկի չափով՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված համամասնությունը՝ 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ հարկի 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով, 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

2. Հաստատել պայմանագրերի նոր գները՝ ըստ սուն որոշման 1-ին կետում նշված համամասնության:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----10---- *Դեմ*----2---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» N 201-Ն որոշման հավելված 5-ի 20-րդ կետը՝

1. Ժամավճարային դրույքաչափերի ավելացման հետ կապված Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի «Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 3-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելված 2-ի ««Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ» և ««Ջերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ» բաժինները՝ ՀՈԱԿ–ների հաստիքացուցակները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի մարտի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ----12---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 10-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝

1. Հաշվի առնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի և 13-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ անվավեր ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի «Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 10-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----12---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ն/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՁԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման հավելվածի 2-րդ կետով և Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով ու 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող պետական սեփականություն (վկայական՝ 14112019-10-0008) հանդիսացող 10-016-0208-0034 կադաստրային ծածկագրով հողամասը (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ կորիզավոր այգի, մակերեսը՝ 2,12862 հա) գյուղատնտեսական գործունեության իրականացման նպատակով ուղղակի վաճառքով Գնդեվազ գյուղի բնակիչ, նշված հողամասի վարձակալ Դուստրիկ Աղվանի Ալավերդյանին կադաստրային արժեքով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարձակալն ունի վարձակալած հողամասի գնման նախապատվության իրավունք. հողամասի վաճառքի գինը՝ 734400 (յոթ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ----11---- Դեմ----0---- Ձեռնպահ----1----*

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՁԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին և 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման,

վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման հավելվածի 2-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 2,22126 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0284-0002) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, ամսական վարձավճարի մեկնարկային չափը՝ 20.000 (քսան հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տաս) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----10---- *Դեմ*----2---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ա/

Լսեցին՝

***«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՐՎԻՏՈՒՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին, 5-րդ մասի 2-րդ պարբերությանը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ և 216-րդ հոդվածներին համապատասխան՝

1. Համաձայնվել «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կարիքների համար (ջրագծի անցկացում) Ջերմուկ համայնքի Ջերմուկ հայանքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքում գտնվող 1,1842 հա ընդհանուր մակերեսով (7 հողակտոր) համայնքային սեփականության և 1,6705 հա ընդհանուր մակերեսով (6 հողակտոր) պետական սեփականության հողամասերի գույքային սերվիտուտ սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի օգտագործման համար սահմանել վճար. սերվիտուտի պետական գրանցման պահից՝ յուրաքանչյուր հողակտորի համար ամսական 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----7---- *Դեմ*----2---- *Ձեռնպահ*----3----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ «ՋԵՐՄՈՒԿԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՋԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 81-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի և 64-րդ հոդվածի 1-ին մասերը և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» ենթակետն ու 24-րդ հոդվածը, ինչպես նաև Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» և «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների համապատասխան դրույթները՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 13-ի N 98-Ա որոշումը՝ համաձայն հավելված 1-ի. Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 44.215.1242944) և «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 44.215.914148) միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Սահմանել, որ՝

1) Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» և «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդը «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միաձուլված իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան.

2) «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան համայնքի կոմունալ սպասարկման, բարեկարգման և համայնքային գույքի կառավարման ոլորտներում միասնական գործունեության իրականացումն է.

3) «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

ա. համայնքում կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման, բարեկարգման աշխատանքների, աբոնենտային վճարների գանձման կազմակերպումն ու իրականացումը

բ. բնակչության կենսապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացումը

գ. բազմաբնակարան շենքերի պահպանումը, սպասարկումը, բնակելի ֆոնդի կառավարումը, գյուղական բնակավայրերի կոյուղագծերի, ջրագծերի, ոռոգման համակարգի սպասարկումը և ընթացիկ նորոգումը

դ. համայնքային գերեզմանատների կառավարումը, փողոցային լուսավորվածության արտաքին ցանցի սպասարկումը և ընթացիկ նորոգումը, համայնքի կանաչ գոտիների, քաղաքային այգու սպասարկումը և բարեկարգումը:

3. Լիազորել Ջերմուկ համայնքի ղեկավարին հիմնադրի անունից հաստատելու փոխանցման ակտը, գույքի կազմը և արժեքը և նշված գույքի հանձնման-ընդունման ակտերը:

4. Հաստատել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

*Կողմ*----10---- *Դեմ*----1---- *Չեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

Լսեցին

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԵՐՄՈՒԿԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----10---- *Դեմ*----1---- *Չեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39-Ա/

Լսեցին

***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄՈՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի

ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի հետևյալ բնակիչներին՝

Արթուր Ալավերդյան՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Լարիսա Խաչատրյան՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Գեղեցիկ Մանուկյան՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ

Արման Թադևոսյան՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----12---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՁԵԿ. ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով և քննարկելով Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագրին առնչվող խնդիրը՝

1. Ընդունել ուղերձ ուղղված Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----2---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----10----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Լսեցին

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ/**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:

2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Ջերմուկ համայնքի 2023 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----12---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի մայիսի 30-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----12---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | ստորագրություն |
|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | բացակա |
| Վարդազարյան Աննա Վասակի | |
| Խաչատրյան Գոհար Բաբկենի | բացակա |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | |
| Այվազյան Մխիթար Վոլոդյայի | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | |
| Գևորգյան Մանան Աղվանի | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | |

*Ջերմուկ համայնքի ղեկավար՝* Վահագն Արսենյան _____

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյանը _____